տեսող յարգանդին՝ և երկիրպագող յորովայնին. նախընթաց թագաւորին և պատրաստող պողոտային. սրբող սրբոցին՝ և տեսող անտեսին. ծանաւթ անծանաւթին՝ և ցուցանող որոց տեսին. մեծ ի ծնունդս Եւա: Քահանայապետական զաւակ, ամլածին ծաղիկ, հրեշտակատուր տղա, ողջախոհ տրախիլ, ա անապատասուն տատրակ, մարախաճաշակ մարգարէ. ճրագ ճառագայթին և արեւսեակ արեգականն. հաւախաւս քաղցրաձայն վանող գիշերի և քարոզ տըւնջեան. յարուցող յընթացս և ի գործս և ժողովող յորջս և ի մորիս. զարնանաբեր ծիծառն և արգասին բ յերկինս. որպէս եղեր սոթող հարսինն, և փեսաւէր փեսային զայըստեամբք կրկին: Այսպէս եղեր [Թղ. 16 ա] և Հայոց աշխարհիս եկաւորութեամբ յերկրիս նախաշաւեղ ամենայն բարեաց:

Զի և քակեցան կուռքն և փշրեցան մեհեանքն, և հալածեցան Դիւանեանքն. և բացաւ դուռն ողորմութեան Աստուծոյ, ամ ըստ ամէ շնորհել մեզ: Զի որքան եկիր՝ և ես աստ, ոչ պակասէ բարութիւն Տեառն յայսըմ աշխարհէ. որ ես վերին Երուսաղէմ հիմն

ա. Չկայ Ն. Հ. Ի. „ունարկն բառն է.

բ. Անծանօթ բառ է, չկայ Ն. Հ. Բ.